№ 238 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21 1899 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21 № 238

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція „Мшакъ".
Կամ Tiflis. Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն՝ օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Աննա Տէր-Նիկողոսեան իր զաւակներով խորին ցաւով յայտնելով առաջինը իր ամուսին, երկրորդները իրանց հօր՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Զանգեզուրի գաւառի Ղափան պղնձահանքում՝ ծանուցանում են ազգականներին և ծանօթներին, որ այսօր, երեքշաբթի, դեկտեմբերի 21-ին, մահվան եօթներորդ օրը, տեղի կունենայ հոգեհանգիստ ս. Նշան եկեղեցում (Սերեբրեանի փողոց): Պատարագը կը սկսվի ժամի 11-ին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկրաշարժների ուսումնասիրութիւն.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր Տերեշչենկոները. Բաց նամակ Թիֆլիսի Նաւթարդիւնագործական ընկերութեան մասնակիցներին. Նամակ Պետերբուրգից. Նամակ Ալէքսանդրօպոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլօ-Տրանսվաալեան պատերազմը. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԵՐԿՐԱՇԱՐԺՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

—

Երկրաշարժը, որ տեղի ունեցաւ կիրակի, դեկտեմբերի 19-ին, զգալի նիւթական վնասներ և կորուստներ չը պատճառեց, բայց առաջ բերեց մեծ խուճապ և երկիւղ ազգաբնակութեան մէջ: Երկրաշարժը Թիֆլիսում յաճախ է պատահում, համարեա իւրաքանչիւր տարի, և երբեմն ունենում է լուրջ հետևանքներ, վնասելով շինութիւններին: Բայց մինչև այժմ ոչ մի լուրջ ուսումնասիրութիւն չունենք, թէ ի՛նչ բնաւորութիւններ են կրում Թիֆլիսի երկրաշարժները, ո՛ր աստիճանի նրանք ինքնուրոյն են, սահմանափակ իրանց շրջանում և ո՛րքան նրանք կապ ունեն ուրիշ տեղերի երկրաշարժների հետ: Ըստ երևոյթին այս անգամվայ երկրաշարժը արձագանգ էր աւելի մեծ և հեռաւոր երկրաշարժի, որ գործում է մեծ տարածութեան վրա և որը սակայն զանազան ձևով և ոյժով է արտայայտվում զանազան տեղերում:

Վերջին աշխարհագրական կօնգրէսում, որ տեղի ունեցաւ Բեռլինում՝ դօկտօր Գերլանդ ներկայացրել էր ժողովին երկրաշարժները ուսումնասիրելու մի ծրագիր, որ ընդունվեց կօնգրէսի կողմից համակրութեամբ: Գերլանդ առաջարկում է հիմնել միջազգային մի ընկերութիւն, որ որոշ եղանակով դիտողութիւններ և հետազօտութիւններ կատարէր երկրաշարժների մասին աշխարհիս բոլոր մասերում և հրատարակէր իր աշխատութիւնները մի կենտրօնական հրատարակութեան մէջ: Բեռլինի աշխարհագրական ընկերութիւնը նորերս դիմել էր Պետերբուրգի կայսերական աշխարհագրական ընկերութեան, առաջարկելով մասնակցել նոր ընկերութեան կազմակերպութեանը: Պետերբուրգի աշխարհագրական ընկերութիւնը իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ ներկայ դեկտեմբերի 7-ին, գտաւ միջազգային երկրաշարժական ընկերութիւն հիմնելու գաղափարը նպատակայարմար և նշանակեց Ռուսաստանի կողմից պրօֆեսոր Մուշկետօվին ներկայացուցիչ այն կենտրօնական յանձնաժողովում, որ պէտք է մշակէ և ղեկավարէ ընկերութեան գործերը: Ընկերութեան կենտրօն ընտրված է Ստրասբուրգ քաղաքը:

Նոր կազմակերպվող ընկերութեան հեղինակները իրանց ցուցակի մէջ մտցրել են և մեր երկիրը, որ ենթակայ է երկրաշարժի յաճախակի հարուածներին: Ցանկալի է, որ ընկերութեան այն ճիւղը, որ պէտք է գործէ մեր երկրում՝ կարողանար օր առաջ կազմակերպվել և սկսվէին կանոնաւոր դիտողութիւններ և հետազօտութիւններ կատարվել մեր երկրում և պատրաստէին գիտական նիւթ՝ պարզելու Կովկասի երկրաշարժների բնաւորութիւնը և տարածութիւնը:

Մենք կարողացել ենք ապահովել մեր կալուածները հրդեհից, մենք ապահովում ենք փոխադրվող ապրանքները կորուստից, մենք պատրաստվում ենք ապահովելու մեր ցանքսերը կարկուտի և հեղեղների տուած վնասներից: Բայց դեռ ոչ մի միջոց չունենք ապահովվելու երկրաշարժի վնասներից: Մի ժամանակ Շամախու երկրաշարժները թելադրեցին «Մշակի» մէջ առաջարկելու երկրաշարժից ապահովվելու համար հիմնել միջազգային մի յատուկ ընկերութիւն, որին պէտք է մասնակցէին այն երկիրները, որտեղ աւելի յաճախ տեղի ունեն երկրաշարժներ: Այդպիսի մի ընկերութեան գաղափար կարող է աւելի շօշափելի դառնալ, երբ մանաւանդ Բեռլինի կօնգրէսի ծրագրած միջազգային հետազօտութիւնները կը կազմակերպվեն հաստատ հիմքերի վրա:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՏԵՐԵՇՉԵՆԿՕՆԵՐԸ

—

Հեռագիրը արդէն հաղորդեց Կիևում յայտնի բարեգործ Տերեշչենկոյի յօբելեանի մասին: Մեր մամուլի մէջ եղել են մի քանի փորձեր՝ արծարծել մեր բարեգործների և նրանց բարեգործութեան հարցը, բայց տարաբախտաբար այդ փորձերը չեն հասել իրանց նպատակին: Մինչև այժմ ոչ ոքի յայտնի չէ, ինչ պայմանների մէջ են գտնվում բարերարը և նրա որդեգիրը. մենք գիտենք, որ այս-ինչ կրեսոսը ունի այսքան որդեգիր, միւսը ունի երկու կամ մէկ որդեգիր և ուրիշ ոչինչ. իսկ որդեգրի դրութիւնը, նրա յարաբերութիւնները դէպի բարերարը պատած են մառախուղով շատերի համար:

Մէկ ամիս սրանից առաջ այդ կէտը փոքր ինչ լուսաւորվեց, շնորհիւ այն տխուր դէպքին՝ որը պատահեց Շվէյցարիայում: Դժուար էր հաշտվել այն հանգամանքի հետ, որ մէկը կարող է հասցնել միւսին մինչև անձնասպանութեան: Բայց իրողութիւնը ակներև էր: Այն էլ ովքեր են անձնասպանութեան հասցնողները... մեր բարերարները, մեր Տերեշչենկոները:

Լսելով, որ այս կամ այն հարուստը ունի որդեգիր՝ մենք ասում ենք, թէ նրանց դիզած հարստութիւնը օգտաւէտ է ուրիշների համար ևս. մենք կարծում էինք, որ արած բարերարութիւնը հասնում է իր նպատակին,—որդեգրած ուսանողները հանգիստ ապրում և պարապում են իրանց ընտրած առարկաներով: Բայց իրականութիւնը ուրիշ բան է ցոյց տալիս:

Օրինակ, մենք կը վերցնենք Երևանի բարեգործներից մէկին: Հրապուրված այդ բարերարի խօսքերով՝ ուսանողը հանգիստ սրտով ճանապարհ է ընկնում համալսարան, նրա դրամականը ապահովված է: Երկու-երեք ամսվայ ընթացքում կանօնաւոր կերպով նա ստանում է ամսական թոշակը, որը մի գեղեցիկ օր յանկարծ դադարում է. անցնում են շաբաթներ, ամիսներ—ոչ բացատրութիւն, ոչ դրամ: Նոյն բարերարի մօտ որդեգրված է և ուրիշ ուսանող, որի դրութիւնը առաջինից վատ է. գոնէ առաջինի դրութիւնը շուտով պարզվեց, և նա կարող է այլ տեղ որոնել ապրուստի միջոցներ:

Մի կերպ «ծօլա տանելով», մէկ օր քաղցած մնալով, մէկ օր ցամաք հաց ուտելով՝ թոշակաւորը այսպէս անց է կացնում չորս տարի, ստանալով միջին թւով տարեկան 50—175 րուբլի. ինն ամիս ապրել (դեռ չը հաշուելով ամառվայ ամիսները), գրքեր և հագուստեղէն գնել, համալսարանի վճար տալ, և այդ բոլորը 175 րուբլով: Իսկ ինչպիսի խոստումներ են եղել.—գրքերի առանձին՝ համալսարանի վճար առանձին և ամսական կանօնաւոր 25 րուբլի...

Ուսանողին մնում է մի քանի ամիս միայն, և նա կարող է ապրել ինքը աշխատել. բայց ութ ամսվայ ընթացքում նա մի կոպէկ չէ ստացել. յուսահատված, նա պատրաստւում է կորցնել մէկ տարի, գտնել մասնաւոր աշխատանք և հրաժարվել այդպիսի բարերարութիւնից...

Դա առաջին քայլն է մեր ուսանողութեան կողմից, և մենք ուրախութեամբ ողջունում ենք ուսանողի այդ քայլը. դա բարոյական դաս է բարերարի համար:

Այսպէս է մեր բարերարների մեծամասնութիւնը. միթէ նրանք չեն հետաքրքրվում, թէ ինչով են ապրում իրանց որդեգիրները, որոնք միայն իրանցից են թոշակ ստանում, և սակայն 7—8 ամսվայ ընթացքում մի կոպէկ չեն ուղարկում նրան: Գուցէ նստած իրանց և ուրիշների ոսկով լի քսակների վրա՝ նրանք կարծում են, որ գիտութիւնը հնարել է օդով ապրելու միջոց... Աւելի ևս զարմանալի է, որ նրանք ունեցել են ուսանող որդիներ, որոնց վրա հազարներ են ծախսել. ուրեմն ուսանողի կեանքը և նրա կարիքները նրանց յայտնի են:

Միևնոյն ժամանակ այդ բարերարները յայտնում են իրանց տհաճութիւնը՝ երբ այս կամ այն առթին որդեգրած ուսանողի ծնողները (լինեն նրանք ծանօթ կամ անծանօթ) չեն գնում նրանց մօտ շնորհաւորելու. կարող է, ճիշտ է, և պէտք է բարերարին հետաքրքրէ որդեգրի կեանքը և ուսման առաջադիմութիւնը. բայց նա իրաւունք չունի ոտնակոխ անել ուսանողի մարդկային իրաւունքները և արժանաւորութիւնը:—Որդեգիրը ճորտ չէ, այլ բարերարի նման մարդ և գուցէ դեռ աւելի ազնիւ...

Համեմատենք այժմ ռուսաց Տերեշչենկոյին և մեր Տերեշչենկոներին. ինչ ենք տեսնում. մի կողմից յօբելեան, շնորհաւորութիւններ և պարզ ապացոյց, որ նրա բարերարութիւնները հասել են իրանց նպատակին, իսկ միւս կողմից՝ տարիներ կորցնելը, բարոյապէս և ֆիզիքապէս քայքայվելը և անձնասպանութիւն...

Լևոն Մելիք-Օհանջանեան

Խարկով.

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻ ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

—

Պարտք եմ համարում ներկայ նամակովս ձեր ուշադրութիւնը դարձնել այն հանգամանքի վրա, որ ներկայ տարվայ նոյեմբերի 23-ին, Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական ընկերութեան անդամների ժողովը ես ապօրէն եմ համարում և այս օրվանից յետոյ վերոյիշեալ ընկերութեան բոլոր գործառնութիւնները անկանօն եմ համարում ես և հակառակ ընկերական դաշնագրին: Բացի դրանից, վերոյիշեալ ընկերութեան ընդհանուր ժողովում առանց իմ համաձայնութեան և իմ բացակայութեան ժամանակ (ընդհանուր ժողով գումարելու մասին ես ծանուցում չեմ ստացել) դրել էին իմ ընտրողական արկղը իմ ազգանունով: Կատարելապէս անկանօն համարելով այդ ընտրութիւնները՝ ես ներկայ նամակովս բողոքում եմ այդպիսի յանդուգն իրաւազանցութեան դէմ:

Վերև ասածներիս պատճառով ես հրաժարվում եմ ամեն թէ նիւթական և թէ բարոյական պատասխանատուութիւնից այն անձանց առջև, որոնք 30% բաժնեվճար են մտցրել նախագծված Թիֆլիսի Ակցիօնէրական Նաւթարդիւնաբերական ընկերութեան մէջ մասնակցելու համար և այժմ այս կամ ուրիշ պատճառով չը ցանկացան կամ չեն ցանկանայ մտնել «Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական ընկերակցութիւն և ընկ.» ֆիրմայի տակ նոր կազմակերպւող ընկերութեան մէջ:

Ստեփան Մանուէլեանց

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Դեկտեմբերի 10-ին

Դեկտեմբերի 8-ին տեղիս Կրեդիտային ընկերութեան դահլիճում, մի քանի հայ ուսանողների նախաձեռնութեամբ, յայտնի դերասանուհի տ. Սավօրսկայա տուեց գրական-երաժշտական երեկոյթ, ի հարկէ բարեգործական նպատակով: Գրական բաժնում մասնակցում էին արտիստ Դալմատով և յայտնի գրական գործիչներ, տեղական առաջնակարգ խմբագրութիւնների ներկայացուցիչները—պ. պ. Ֆիլիպպով՝ «Научное Обозрѣніе»-ի խմբագիրը, Ստրուվէ—յայտնի սօցիօլոգ—տնտեսագէտ, Արսաժին և իշխան Բարեատինսկի—«Сѣверный Курьеръ»-ի խմբագիրները, Թոթոմեանց—յիշեալ թերթերի խմբագրութիւնների անդամ աշխատակիցը, Պանտելէեվ—գրողների Դաշնակցութեան (Союзъ писателей) նախագահը, տիկին Շչեպկինա—Կուպերնիկ, կին բանաստեղծը. իսկ երաժշտական բաժնում տիկիններ Սպենդիարեան, Վասիլևևա, և ջութակահար պ. Լեվչէզ, վիօլօնչելիստ պ. Դօբրօխոտով:

Երեկոյթը իր բովանդակութեամբ շատ աջող անցաւ. գլխաւոր հետաքրքրութիւնը ներկայացնում էր գրական բաժինը, ուր հանդէս եկան վերոյիշեալ գրողները: Սրանք իրանց կարդացած նիւթերով մեծ ազդեցութիւն թողին ներկայ եղող հասարակութեան վրա, որը բուռն ծափահարութիւններով ոչ միայն կրկնել էր տալիս, այլև երեք-չորս անգամ բեմ էր դուրս կանչում և ստիպում կարդալ: Տիկին Շչեպկինա—Կուպերնիկը կարդում էր միմիայն իր երկերը, որոնց միջից առաւելապէս շատ ու շատ դուր եկաւ հասարակութեանը «Կին» խորագրով բանաստեղծութիւնը: Արսաժինն ու Ֆիլիպպովը կարդացին Շչեդրինից և այլ ռուս հեղինակներից. իշխան Բարեատինսկին կարդաց Ահարոնեանի «Ջալադ վուրգունի»-ի ռուսերէն թարգմանութիւնը Ջանշեանի «Братская Помощь» ժողովածուից: Բոլորից վերջը բեմ դուրս եկաւ տիկին Սավօրսկայան, որն ընդունվեց բուռն ծափահարութիւններով: Շնորհալի արտիստուհին կարդաց մի քանի արձակ բանաստեղծութիւններ և այնպիսի դիւթիչ զգացմունքով, այնպիսի վառ խանդով, որ ոգևորված հասարակութիւնը 5—6 անգամ բեմ կանչեց նրան ու ստիպեց նորից և նորից կարդալ...

Երաժշտական բաժինը թէև մեծ չէր, բայց նմանապէս լաւ անցաւ: Կատարողների մէջ ամենքի հետաքրքրութիւնն էր շարժում երգչուհի տիկին Սպենդիարեանը. պէտք է խոստովանած, որ հասարակութիւնը խիստ հաւանեց տիկնոջ թէ ձայնը և թէ երգեցողութիւնը: Շնորհալի երգչուհին, որ ի միջի այլոց կատարեց մի հայերէն ռոմանս, լաւ ապագայ է խոստանում, մանաւանդ որ շատ անգամ այդ վկայել են տեղիս լրագիրներում երաժշտական յայտնի րեցէնզէնտները, որոնք առիթ են ունեցել լսելու նրան:

Գալով երեկոյթի նիւթական կողմին՝ պէտք է ցաւով խոստովանել, որ դահլիճը շատ քիչ հասարակութիւն էր գրաւել, եղածներն էլ մեծ մասամբ օտարներ էին: Ի՞նչ ասել Պետերբուրգի հայ հասարակութեանը, որ այս անգամ էլ, ինչպէս և միշտ, ցոյց տուեց իր սովորական անտարբերութիւնը դէպի մի բարի գործ, ցոյց տուեց, որ մամօնային երկրպագելուց և նեղ, անձնական շահերից դուրս ոչինչ չէ ընդունում: Բայց դա ոչինչ: Տեղական գաղութի այդ տեսակ վարմունքը միանգամայն նսեմանում է տեղիս հայ ուսանողութեան ցոյց տուած վարմունքի առաջ: Հայ ուսանողութիւնն ևս մի փաստով մերկացրեց իր մտաւոր և բարոյական սնանկութիւնը, ապացուցեց, թէ ո՛րքան ստոր է կանգնած, որքան նեղահայեաց է օտար, մանաւանդ ռուս ուսանողների հետ համեմատելով: Պետերբուրգի 200-ից աւելի հայ ուսանողներից այդ երեկոյթին ներկայ էին հազիւ 20 հոգի, որ զարմանք էր պատճառում մինչև անգամ օտարներին: Մի կողմը թողած երեկոյթի բարի նպատակը՝ գոնէ այդ անձինք հետաքրքրվէին մասնակցող գրողներով, որոնք սակաւ են հանդէս գալիս հասարակական երեկոյթներում. հետաքրքրվէին նրանց կատարած նիւթերով... Ներկայ փաստը տեսնելով՝ չէր կարելի լալ և չը պախարակել մեր «հասարակութեան ապագայ յոյս» անուանող երիտասարդութիւնը...

Ուսանող

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Դեկտեմբերի 12-ին

Չը նայելով, որ շատ տեղեր արդէն բացվել են դպրոցները, և մանուկները պետական լեզուի հետ սովորում են նաև մայրենի լեզուն՝ հայ-կաթօլիկ համայնքը ամենևին չէ մտածում դպրոցներ ունենալու անհրաժեշտութեան մասին: Մեր ամեն մի գիւղում կայ եկեղեցի, ամեն մի գիւղում կան մէկ կամ երկու քահանայ. եկեղեցիներն ունեն փող, ոչ թէ հարիւրներով, այլ հազարներով, իսկ ժողովուրդը և իր որդիքը թաղված են խորը տգիտութեան մէջ: Եկեղեցապատկան փողերը տալիս են այս կամ այն անձին «շահեցնելու մտօք», և յանկարծ ինչ—ջերմեռանդ կարծված երէցփոխները «քաւարանն» են գցում այդ գումարները... Ահա մեր եկեղեցապատկան գումարների տխուր վախճանը...

Մեր հոգևորականութիւնը, որը մեծ մասամբ անկիրթ ու տգէտ մարդկանցից է բաղկացած, ամենևին սէր չունի դէպի դպրոցը: Հոգևորականութեան առաջին պարտքն է իր ժողովրդի զարգացման մասին մտածել, բայց մեր հոգևորականութիւնը ոչ միայն չէ աշխատում դպրոց բանալ—այլ և արգելք է լինում և յայտնապէս դէմ է լուսաւորութեան գործին: Օրինակ, Ղազանճի և Կուր-աղբիւր գիւղի ժողովուրդները համախօսական են կազմում, որ Ղազանճի գիւղում բացվի դպրոց: Ղազանճին այն առաւելութիւնն ունի, որ այդ գիւղում կայ պօստի կայարան, գրասենեակ և աւելի մեծ գիւղ է, իսկ Կուր-աղբիւրը նրան շատ մօտ է. և ինչ... կուր-աղբիւրցի քահանան, որ մի տգէտ և անկիրթ մարդ է՝ գործին արգելք է լինում: «Ինչու պէտք է Ղազանճի գիւղի քահանան, որպէս կրօնուսոյց, ռոճիկ ստանայ, և ես ինչ. ոչ, չենք ուզում, մեզ դպրոց պէտք չէ. մեր նախնիք առանց դպրոցի ապրեցան՝ մեռան. մենք էլ նրանց պէս կապրենք. եթէ նրանք դժոխք գնացին՝ մենք էլ կերթանք դժոխք»: Եւ ահա տգէտ հոգևորականները այսպէս գործին արգելք են լինում և իրանց նիւթական շահին զոհում են ժողովրդի բարոյական շահը, չը նայելով, որ այդպիսի հոգևորականներից շատերը իրանք իրանց որդոց ուղարկում են ուրիշ տեղեր ուսում առնելու:

Շիրակեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, դեկտեմբերի 19-ին, Գրիգոր Արծրունու մահվան եօթներորդ տարելիցի օրը, «Մշակի» խմբագրութիւնը հոգեհանգիստ կատարեց հանգուցեալի գերեզմանի վրա:

—

Կիրակի, դեկտեմբերի 19-ին, Թիֆլիսում տեղի ունեցան երկրաշարժի երեք ցնցումներ, առաւօտեան 1 ժամ 50 րոպէին, երեկոյեան 4 ժամ 40 րոպէին և 9 ժամ 15 րոպէին: Առաջին անգամ երկրաշարժը երկարատև էր և խիստ, երկրորդ անգամ աւելի թոյլ և երրորդ անգամ աննշան: Երկրաշարժը առաջին անգամ տևեց մէկ րոպէից աւելի: Նա զգալի էր Թիֆլիսի բոլոր մասերում: Այդ ժամանակ առաջին գիմնազիայում կատարվում էր տարեկան ակտ: Երկրաշարժը սկզբում մեծ յուզմունք առաջացրեց, բայց յետոյ հանդիսականները հանգստացան և ակտը շարունակվեց: Թիֆլիսի ժողովարանում տիրեց իրարանցում, և սանդուխների վրա այնքան մարդ ժողովվեց, որ հազիւ կարելի եղաւ առանց վնասի նրանց ճանապարհ տալ դէպի դուրս: Շատ տներում երևացել են ճեղքուածներ, որոնք սակայն աննշան են: Երկրաշարժը մեծ վրդովմունք և իրարանցում առաջ բերեց ազգաբնակութեան մէջ, տեղի ունեցան ուշաթափութիւններ և ջղային տկարութիւններ: Երկրաշարժը կրում էր մանր ցնցումների բնաւորութիւն:

—

Երկրաշարժի ցնցումներ, «Кавказъ» լրագրի ասելով, տեղի են ունեցել դեկտեմբերի 19-ին Սուխում և Քութայիս քաղաքներում:

—

Սախալին կղզու Ալէքսանդրովսկայա քաղաքից պ. Կօնստանդին Եսայեանցից ստացանք տասը րուբլի, որպէսզի «Մշակի» մէկ օրինակ ուղարկենք Սախալին, Ալէքսանդրովսկայա քաղաքի հայոց գրադարանին:

—

Չքաւոր ուսանողների օգտին ստացանք հետեւեալ գումարները. Բագուից Եղբարք Յովհաննէս և Մարտիրոս Կիրակոսեանցներից երեք րուբլի. Բաթումից՝ Խորէն Կլորիկեանցի միջոցով ինն րուբլի 25 կ., որ նուիրել են՝ Մ. Քահանայ Մինասեանց, Ռ. Ղուկասեանց, Կ. Քալանթարեանց, Խ. Կլորիկեանց, Խ. Ցամրաչեանց, Մ. Գասպարեանց և Կ. Մ. Թ. մի-մի րուբլի. Սթավրի Վարիտիմօս (յոյն), Նիկօլա Աղամիդի 50-ական կոպ. և Ն. Զօրեան 25 կոպէկ:

—

Մեզ հաղորդում են, որ շուտով Թիֆլիսի Փառքի տաճարում պէտք է բացվի նկարիչ Արշակ Ֆեթվաճեանի պատկերների ցուցահանդէսը: Պատկերները մեծ մասամբ պատկանում են ժանրային տեսակին: Պատկերների թիւը կը լինի 50-ից աւելի: Ֆեթվաճեան կատարելագործվել է Հռոմի Սան-Լուկա կոչված նկարչական ճեմարանում: Նրա պատկերները եղել են Հռոմի, Վիեննայի և Պետերբուրգի պատկերահանդէսներում:

—

Այսօր, երեքշաբթի, դեկտեմբերի 21-ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում տեղի կունենայ մի նիստ, որի զբաղմունքն է լինելու քննել շերամի սերմի վրա հսկողութիւն նշանակելու խնդիրը: Մեր շերամաբոյծները կարող են այդ նիստի միջոցին յայտնել իրանց բոլոր կարիքների և պահանջների մասին: Սկիզբն է երեկոյեան 8 ժամին:

—

Ստացանք Հայկունու գրքոյկը—«Կացինը քարին կպաւ. Դրամատիքական պատկերներ չորս արարուածով և վեց պատկերով»: Գրքոյկը բաղկացած է փոքրադիր 235 երեսից և արժէ 1 րուբլի: Տպված է Բագւում:

—

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 1-ից սաստիկ ձմեռ է այստեղ: Քաղաքիս մէջ ցուրտը 28° է Րէօմիւրի ջերմաչափով: Շատերը պատմում են, որ 1842 թւից սկսած այսպիսի ցրտեր չեն տեսել: Ձիւնի հաստ շերտը պատել է ամբողջ շրջակայքը. երթևեկութիւնը ոչ միայն սայլերի համար, այլ նոյն-իսկ երկաթուղու համար մի քանի օր ընդհատված էր: Շատ դժուար է չքաւորների դրութիւնը. ապրուստի ամեն դուռ փակված է թանգութեան պատճառով, նոյն իսկ նաւթն այնպէս թանգացաւ, որ փութը ծախվում էր 20 կոպէկով: Ի՞նչպէս ապրի մի բանւոր, մի մշակ, կամ մի արհեստաւոր, երբ աշխատանքի դռներ չը կան, իսկ կենսական պիտոյքները կրկնակի գին են ստացել...

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Գիւղիս քահանայական գործեան հանգոյցը լուծվեց... Ճեմարանաւարտը տեղի տուեց գիւղիս յայտնի հանգուցեալ քահանայի յայտնի զաւակին... Բացատրութիւնները աւելորդ են: Թեմիս առաջնորդը ձեռնադրեց վերջինիս»:

—

Հին-Նախիջևանի ԿԶՆՈՒԹ գիւղից մեզ գրում են. «Մօտակայ Խաչափարաղ գիւղում սաստիկ տարածված է ծաղիկ հիւանդութիւնը: Մի քանի օր առաջ այստեղից գնացին յիշեալ գիւղը ծաղկահատներ՝ գոնէ առողջ երեխաների ծաղիկը կտրելու: Բայց թուրք գիւղացիները, շնորհիւ տգիտութեան, չը թոյլ տուին իրանց «աղիզ բալաներին նարդալամիշ անելու», և յիշեալ ծաղկահատները յուսախաբ վերադարձան ու յայտնեցին այդ մասին գաւառական բժշկին»:

—

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 7-ից սկսած խոր ձիւն եկաւ. շատ դժուարացաւ անասունների պահելը. ցուրտը սարսափելի է: Ճանապարհները անանցանելի են. սահնակներ են լծում փօստերում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՕ-ՏՐԱՆՍՎԱԱԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Անգլիական լրագիրները ուրախութիւն են յայտնում՝ Մէտուէնից տեղեկութիւններ ստանալու առիթով. այդ ապացուցանում է, որ մինչև անցեալ չորեքշաբթի նա յարաբերութիւններ ունէր հարաւի հետ:

«Daily News» լրագրի թղթակիցը հաղորդում է Մօդդէր գետից, որ բօէրների զօրեղ ամրութիւնները ձգվում են 19 քիլոմէտր տարածութեան վրա. Նրանք այնպիսի թնդանօթներ ունեն, որոնց ռումբերը հասնում են անգլիական բանակին: Ըստ երևոյթին, բօէրները պատերազմական մթերքների առատ պաշար ունեն: Նատալից նոյնպէս նշանաւոր լուրեր չը կան: «Daily News» լրագրի խօսքով՝ զինուորական մինիստրութեան մէջ երկիւղ չեն կրում Լէդիսմիթի վիճակի մասին. քաղաքի մէջ այնքան պաշար կայ, որ երեք ամիս բաւական է:

Պատերազմական բեմից որևէ նշանաւոր լուր չը լինելու պատճառով, մամուլը սկսել է զբաղվել Դէլագօա ծովածոցի հարցով: «Standard» լրագրի Լիսաբոնի թղթակիցը հաղորդում է, որ վերոյիշեալ ծովածոցում կանգնած անգլիական զրահակիր նաւերը նորերս յարքունիս գրաւեցին երկաթուղիական զանազան պատկանելիքներ, որոնք Տրանսվաալի համար էին և այնտեղ պէտք է ուղարկվէին: Այնու ամենայնիւ ապրանքների, թնդանօթների և պատերազմական մթերքների մեծ պաշարներ բերվում են Լորէնցօ-Մարկեզէից դէպի հիւսիս և այնտեղից էլ Տրանսվաալ են փոխադրվում: Անգլիական մամուլի մէջ այդ առիթով գանգատներ են լսվում պօրտուգալական կառավարութեան հասցէին, բայց «Daily Mail» լրագրի Լիսաբոնի թղթակիցը հաղորդում է, որ իբրև այդպիսի դրութեանը շուտով վերջ կը տրվի: «Հարցը կարող է լուծումն ստանալ այնպէս՝ ինչպէս ես միշտ նախագուշակում էի, այսինքն հրատարակելով այն գաղտնի պայմանագիրը, որը ցոյց կը տայ, որ Գերմանիան և Անգլիան համաձայնութիւն են կայացրել պօրտուգալական կառավարութեան հետ ֆինանսական, հետևաբար և վարչական հսկողութեան վերաբերմամբ՝ Պօրտուգալիայի հարաւ-աֆրիկական մի քանի երկիրների վրա, և որ մեր մասումն է գտնվում Դէլագօա:

«Neue Freie Presse» լրագրի թղթակիցը հեռագրում է Լօնդօնից իր լրագրին. «Ինչպէս յայտնի է՝ պօրտուգալական կառավարութիւնը, վախենալով դիւանագիտական կուսակցութիւնից, մինչև այժմ հրաժարվում էր Դէլագօան ծախել Անգլիայի վրա: Պատերազմի սկզբում Անգլիան կրկին բանակցութիւններ սկսեց Դէլագօան ծախելու վերաբերմամբ, որպէսզի հնարաւորութիւն ունենայ ափ իջեցնել այնտեղ Բուլլերի հրամանատարութեան տակ գտնվող զօրքերի մի մասը. բայց պօրտուգալական կառավարութիւնը խուլ մնաց Անգլիայի այդ շահաւէտ առաջարկութիւններին: Այժմ բանակցութիւնները կրկին վերսկսվեցին»:

«Frankfurter Zeitung» լրագրի Պարիզի թղթակցի խօսքով՝ պատգամաւորների ժողովի նախասենեակներում շաբաթ օր յամառութեամբ լուր էր պտտում, որ անգլիացիները արդէն ափ են իջել Լորէնցօ-Մարկեզէում և արշաւում են Պրէտօրիայի վրա:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Frankfurter Zeitung» լրագրի Կապշտադտի թղթակիցը հաղորդում է դեկտեմբերի 17-ից. «Այն հանգամանքը, որ բազմաթիւ անգլիական օֆիցէրներ են սպանվում, բացատրում են նրանով, որ բօէրները ամեն մի զօրաբաժնում պահում են յատուկ վարժված հրացանաձիգներ, որոնց հրամայված է հրացան արձակել միմիայն անգլիական օֆիցէրների վրա: Թէպէտև շատ դժուար է որոշել զօրքի մէջ օֆիցէրներին, որովհետև նրանց հագուստները ոչնչով չեն զանազանվում հասարակ զինուորների հագուստներից, այնու ամենայնիւ, այդ հրացանաձիգները հեռադիտակով կարողանում են որոշել օֆիցէրներին նրանց կրած մի քանի նշաններով, և այդ արդէն բաւական է, որ զոհը գնդակահար լինի:

—Նոյն թղթակիցը հաղորդում է, որ Կապլանդիայի բօէրների մէջ յօգուտ Օրանժեան բօէրների շարժումները աւելի և աւելի լայն ծաւալ են ստանում. աւելի հետաքրքրական փաստը այն է, որ այդ շարժումների մէջ մեծ դեր են խաղում կանայք: Նրանք չեն թաքցնում իրանց տեսութիւնը դէպի իրանց ամուսինները և զաւակները՝ եթէ վերջիններս չեն ցանկանում անջատվել անգլիացիներից, և ստիպում են, որ նրանք անպատճառ միանան Օրանժեան բօէրներին:

—Գեներալ Գատէկր մի շրջաբերական է հրատարակել Ստէրկստրօմում, որով սպառնում է բանտարկութեան ենթարկել ֆէրմաներում բնակվող այն բոլոր անձերին, որոնք կը համարձակվեն պտտել շրջանում, կամ Ստէրկստրօմ գնալ, բացի շաբաթ օրերից, այն էլ առանձին թոյլտուութեամբ: Գատէկրի այդ կարգադրութիւնը հետևանք այն բանի, որ այդտեղի ազգաբնակութիւնը համակրում է բօէրներին և անմիջապէս հաղորդում է նրանց անգլիական զօրքերի ամեն մի շարժումը: «Րէյտերի գործակալութիւնը» հաղորդում է Կվինստօնից, թէ ամենքն էլ համոզված են, որ ուղեցոյցները սխալեցրել են գեներալ Գատէկրին: Ասում են, որ երկու ուղեցոյցներն էլ հրացանի են բռնվել յետ նահանջելու ժամանակ:

—Դեկտեմբերի 1-ին Պանկալտիի զինուորական դպրոցում տեղի ունէին վարժութիւններ գերմանական զինուորական կցորդ Մօրգանի ներկայութեամբ: Զինուորական կցորդը ազատ թիւրք աշակերտների համար դասախօսութիւն կարդաց անգլօ-տրանսվաալեան պատերազմի մասին, ցոյց տալով Հարաւային Աֆրիկայի քարտէզը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 դեկտեմբերի

ԼՕՆԴՕՆ: «Րէյտէրի գործ.»: «Daily Telegraph» լրագրի տեղեկութեամբ, անգլիական կառավարութիւնը մտադիր է ծառայութեան մէջ ընդունել 8,000—10 եօմէնրի և ոչ 3,000, որպէս մտադրված էր սկզբում:

Դուրբանից «Standard» լրագրին դեկտեմբերի 15-ին հեռագրում են, որ մօտ օրերումս Տրանսվաալից եկած անձինք հաղորդում են, թէ դաշտերն ամենալաւ դրութեան մէջ են. հունձը գերազանց է: Այն փաստերը, որ բացի բօէրների գործակալներից, միայն քիչ անձինք հեռանում են երկու հանրապետութեան երկրներից՝ դժուարացնում է արժանահաւատ տեղեկութիւնների ստացումն այդ երկրների դրութեան մասին:

ԻՕՀԱՆՆԻՍԲՈՒՐԳ: Հաստատուն աղբիւրներից քաղած տեղեկութիւններին նայելով՝ ամեն ինչ կարգին է շնորհիւ օտար երկրացիներից կազմած ոստիկանութեան: Ուղիղ է, բօէրների աղքատ ընտանիքները բռնել են ամենալաւ տները, բայց կողոպտման ամեն մի փորձ ճնշվում է:

ՊԻՏԵՐՄԱՐԻՑԲՈՒՐԳ, դեկտ. 16-ին: «Րէյտէրի գործ.»: Լէդիսմիթից հաղորդում են, որ պաշարման սկզբից մինչև դեկտեմբերի 10-ը անգլիացիներից սպանվել են 70 և վիրաւորվել 236 մարդ: Բանակում հանքային տենդի բազմաթիւ դէպքեր են տեղի ունեցել: Այն թնդանօթները, որոնք դեկտեմբերի 11-ին խլած էին հրացանաձիգ գնդի կողմից՝ բօէրները փոխարինում են նորերով, բացի դրանից կազմում են նոր հողային ամրութիւններ Լօմբարդսկօպյէի վրա՝ նոր թնդանօթներ դնելու համար և աւելի ամրացնում են իրանց դիրքը:

ՊԱՐԻԶ: «Հաւասի գործ.»: Մինիստրների խորհուրդը, որ տեղի ունեցաւ այսօր Ելիսեան պալատում՝ զբաղված էր Ֆրանսիայի ափերի և գաղթականութիւնների պաշտպանութեան նախագծով: Ծախքը հաշված է 120 միլլիօն ֆրանկ: Աշխատանքը պէտք է վերջացնվի երկու և կէս տարվայ ընթացքում: Ծախքերը կը ծածկվեն եկամուտի սովորական միջոցներով: Նաւատորմիղն ուժեղացնելու համար պահանջված գումարներն արդէն մտցրած են բիւջէտի մէջ:

ԲՕՍՏՕՆ: «Րէյտէրի գործ.»: Համայնական խորհուրդը վճիռ է կայացրել, որով շնորհաւորում է Կրիւգերին նրա մինչև այժմ ունեցած յաջողութիւնների համար և յոյս է յայտնում, թէ վերջ ի վերջոյ բօէրները յաղթող դուրս կը գան պատերազմից:

ԼՕՆԴՕՆ: «Times»-ին հաղորդում են Թէհրանից, թէ Պարսկաստանը ձգտում է երկու միլլիօն ֆունտ ստերլինգ ձեռք բերել փոխառութեան միջոցով, որպէս զի ծածկէ 1892 թւականի փոխառութիւնը, վճարէ ընթացիկ պարտքն և աստիճանաւորների ռոճիկը, իսկ մնացորդը մտցնէ արքունական գանձարանը: Ապրիլի սկզբում շահն ուղևորվում է Եւրոպա:

ԲԵՐԼԻՆ: «Reichsanzeiger»-ի մէջ տպված է. «Չը նայելով Վօլ՛ֆի գործակալութեան հերքմանը՝ «Lokalanzeiger» լրագիրը շարունակում է տպագրել տեղեկութիւններ անգլօ-գերմանական դաշնակցութեան չինծու բովանդակութեան մասին, ձգտելով այդ տեղեկութիւնները ռեկլամ դարձնել իր համար: Մենք յանձնարարված ենք յայտնելու, որ այդ տեղեկութիւնները հիմնված են յանդուգն և անարուեստօրէն կազմված առասպելների վրա»:

ՊԵՐԿԻԵԱՐՎԻ: Գեներալ-նահանգապետը Պետերբուրգի ուսումնական շրջանի հոգաբարձուի ուղեկցութեամբ, եկաւ Կրասնոյէ Սելօ: Երկրպագութիւն տալով տեղական տաճարի սրբութիւններին՝ բարձր այցելուները նայեցին տեղական ռուսաց դպրոցը: Պատգամաւորները աղ ու հացով ողջունեցին երկրի կառավարչին համայնական տան մօտ, խուռն ամբոխի ներկայութեամբ: Շնորհակալութիւն յայտնելով ուշադրութեան համար՝ գեներալ Բոբրիկովը գովեց տեղական ազգաբնակութիւնը և իր համաձայնութիւնը յայտնեց նրան այն հաւատարիմ հպատակութեան զգացմունքների և անձնուիրութեան առիթով, որոնք արտայայտված են և առանձին ուղերձով յանուն Նորին Մեծութեան: «Մանկերդ պահեցէք», աւելացրեց նա, «որ Ֆինլանդիան մեծ մայր-Ռուսաստանի մի մասն է և նրա հետ կապված է ընդ միշտ: Տեղական օրէնքների և կարգերի խստորէն կատարումը չի խանգարի սրտով ռուս լինելը: Այս խօսքերը ծածկվեցան անլռելի «ուրա»-ով:

18 դեկտեմբերի

ԽԱԲԱՐՕՎՍԿ: Դեկտեմբերի 16-ին 362-րորդ վերստի վրա դրվեցաւ Զաբայկալեան երկաթուղային գծի վերջին կապը, որ շոգու միջոցով միացնում է Ռուսաստանի սիրտը Պրիամուրեան երկրի հետ:

ԼՕՆԴՕՆ, «Րէյտէրի գործ.»: Կրադակից, որ գտնվում է Կապլանդում, դեկտեմբերի 16-ից հաղորդում են, որ Ստրօմբերգի կողմից լսելի է սաստիկ թնդանօթաձգութեան ձայն:

«Times»-ին Լօրէնցօ-Մարկէզէից հաղորդում են դեկտեմբերի 11-ից. «Այստեղ լուր է տարածված, թէ Մաստ Շուէյնը, Օրանժեան հանրապետութեան Նախագահի եղբայրը, և 800 բօէրներ վերջնականապէս հրաժարվում են տրանսվաալեան բօէրներին այսուհետև զինակցելուց»:

Գատէկր և Ֆրէնչ դեկտեմբերի 16-ից հաղորդում են, թէ դրութիւնը մնում է առանց փոփոխութեան: Գատէկր աւելացնում է, թէ Ինդուէի ածխային հանքերի երկաթուղու գիծը նորից բանում է:

ԿԻՄԲԵՐԼԷՑ: «Րէյտէրի գործ.»: Արևմտեան կողմում հետախուզութեան գնացած զօրաբաժինը հալածեց բօէրների պահնակներին դէպի յետ բլէպաշղթայի երկարութեամբ. այդ միջոցին երկու կողմից ևս տեղի ունեցաւ թնդանօթաձգութիւն: Բօէրներն օգնական զօրք ստացան: Անգլիացիք վերադարձան բանակը առանց որևէ կորուստի: Այդ դէպքը ցոյց տուեց, որ բօէրներն ունեն երեք թնդանօթ և որ նրանք կարող են արագութեամբ մի տեղ հաւաքել օգնական զօրքերը:

ՊԱՐԻԶ: «Հաւասի գործ.»: Բարձրագոյն դատարան: Ամբողջ նիստը նուիրված էր Գօդֆրուա և Սաբրան-Պօնտիվէն պաշտպանների ճառերին: Նիստը փակված է:

ԿԱՅԻՐԷ: «Րէյտերի գործ.»: Եգիպտական լրագիրները հաղորդում են մի տեղեկութիւն, որ իբր բղխում է վստահելի աղբիւրից, թէ յայտնի եգիպտական ազիտատօր Մուստաֆա Քեամիլը գրագրութիւն ունի Տրանսվաալի դեսպան Լէյդսի հետ: Լէյդս իբր թէ հաղորդել է Մուստաֆա Քեամիլին, թէ եգիպտացիների համար յարմար ժամանակ է այժմ ազատվելու բրիտանական բարձրագոյն կօնտրօլից: Մուստաֆան մտադիր է հիմնել մի եգիպտական հայրենասիրական լրագիր: Անգլիացոց կարծիքով՝ այդ փաստին նշանակութիւն չը պէտք է տալ:

Կ. ՊՕԼԻՍ: «Կ. Պօլսի գործակալութիւնը» բոլորովին անճիշտ է անուանում այն լուրը, թէ Անգլիան խնդրել է Բ. Դռնից թոյլտուութիւն եգիպտական զօրքերն Հարաւային Աֆրիկա ուղարկելու և այն տեղեկութիւնը, թէ Անգլիան մտադիր է ջորիներ գնել Թիւրքիայում Հարաւային Աֆրիկայի համար:

ՆՈՒՄԷԱ: Այստեղ իւրաքանչիւր օր ժանտախտի նոր դէպքեր են լինում:

ԼՕՆԴՕՆ: «Րէյտերի գործ.»: Ուէլսի պրինցը յանձն առաւ եօմէնրիների զօրաբաժնի պատուաւոր շէֆի կոչումն: Այդ զօրաբաժինը կազմակերպվում է Հարաւային Աֆրիկայում ծառայութեան ուղարկելու համար: Պրինցն իր անունից նուիրեց 100 ֆունտ ստերլինգ որպէս նպաստ այդ զօրաբաժնի ծախքերը հոգալու:

ՎԻԷՆՆԱ: «Րէյտերի գործ.»: Այսօր առաւօտեան այստեղ եկաւ սերբիական Ալէքսանդր թագաւորը, որին երկաթուղու կայարանում ջերմագին ողջունեց կայսրը, կրկին ու կրկին սեղմելով նրա ձեռքը: Կայարանում գտնվում էին նոյնպէս թագաւորին դիմաւորելու համար Վիէննայում գտնվող էրցհէրցօգները, որոնց թւում և էրցհէրցօգ Ֆրանց Ֆէրդինանդը, Բէլգրադում մինչև այժմ դեսպանի պաշտօն վարող Ֆօն Շիսսէլը, սերբիական ընդհանուր հիւպատոս Ֆօն Գանը և կառավարութեան գլխաւոր ներկայացուցիչները: Գնացքի կանգ առնելու ժամանակ զինուորական երաժշտական խումբը ածեց սերբիական ազգային օրհներգը: Յետոյ, երբ թագաւորը կայսրի աջ կողմից գնալով, անցաւ պատուաւոր պահնակի առաջից՝ երկու միապետները ուղևորվեցան Հօֆբուրգ, ուր Ալէքսանդր թագաւորին ողջունեցին պալատական պաշտօնեաները և արտաքին գործերի մինիստրը:

18 դեկտեմբերի

ՎԻԷՆՆԱ: «Neue Freie Presse» լրագրում, դեկտեմբերի 6-ից, արտաքին լուրերի բաժնում տպագրված է մի տեղեկութիւն այն ազդեցութեան մասին, որը ունեցել է կոմս Գօլուխովսկի Ռուսաստանի և Սերբիայի յարաբերութիւնների վրա: Ի նկատի առնելով այն սխալ եզրակացութիւնները, որ հանել են այդ հաղորդութիւնից «Новое Время» և «С.-Петербургскія Вѣдомости» լրագիրները՝ «Neue Freie Presse» լրագիրը միևնոյն բաժնում հերքում է իր այն ժամանակվայ հաղորդութիւնը, ասելով, որ նախ և առաջ հաղորդութեան աղբիւրը մասնաւոր էր, և չը պէտք էր վերագրել Վիէննայի կառավարչական շրջաններին: Ապա, չիշտելով այն միտումները, որ վերագրեց «Новое Время» լրագիրը այդ հաղորդութիւններին՝ «Neue Freie Presse» աւելացնում է. «Մեր կարծիքով, Ռուսաստանի յարաբերութիւնը դէպի Սերբիան բոլորովին չէ վնասում Աւստրօ-Հունգարիայի և Ռուսաստանի մէջ եղած համաձայնութեան. այն հարցը, թէ արդեօք Ռուսաստանը Բէլգրադի դեսպանատան թափուր տեղերի վրա կը նշանակէ ուրիշին, կամ թէ որքան ժամանակ կը տևէ այդ տեղի թափուր մնալը, չէ կարող փոխել աւստրօ-ռուսական յարաբերութիւնները: Եւ առհասարակ մինչև այժմ տեղի չէ ունեցել այնպիսի մի դէպք, որ արդարացնէր «Новое Время» լրագրի եզրակացութիւնները. Ռուսաստանը, նոյնպէս և Աւստրօ-Հունգարիան խուսափում են միջամտել Բալկանեան թերակղզու պետութիւնների ներքին գործերին»:

Մի յօդուածի մէջ, սերբիական թագաւորի Վիէննա այցելելու առիթով, «Neue Freie Presse» լրագիրը այն կարծիքն է յայտնում, թէ Աւստրօ-Հունգարիայի արևելեան քաղաքականութիւնը ընթանում է պարզ որոշված ճանապարհով, որը չէ կարող փոփոխութեան ենթարկվել միայն քաղաքավարութեան պատճառով: Աւստրիական բալկանեան քաղաքականութեան հիմունքները Ալէքսանդր թագաւորի այցելութեան պատճառով ոչ մի փոփոխութեան չենթարկվեցին:

ԲԵՐԼԻՆ: «Վօլ'ֆի գործ»: «Hamburger Nachrichten» լրագիրը յայտնում է, որ նրանց ստացած տեղեկութիւնների համաձայն, «Neues Wiener Tageblatt» լրագրի հաղորդած լուրը՝ Բիսմարկի յիշատակարանը շարունակելու մասին և առհասարակ բոլոր մանրամասնութիւնները, որ Վիէննայի լրագիրը ուղարկել է այդ հաղորդագրութեան հետ՝ բոլորովին հնարովի են:

ՖՕԼԿՍՏՕՆ: «Վօլ'ֆի գործ.»: Դունգէնէսի մօտ, երէկ երեկոյեան գերմանական պօստային շոգենաւը խորտակվեց:

ԼՕՆԴՕՆ: «Րէյտէրի գործ.»: Ինչպէս հեռագրում են «Լլօյդին» Դունգէնէսից՝ նաւաբեկութեան է ենթարկվել համբուրգեան հարաւ-ամերիկական շոգենաւային ընկերութեան «Pelotas» նաւը, որ դուրս էր եկել Սանտոսից դէպի Համբուրգ նոյեմբերի 25-ին: Նիւ-Ռոմէնից ստացված հեռագիրը հաղորդում է, որ «Pelotas» շոգենաւի ճանապարհորդները անվնաս են մնացել:

ՆԻՒ-ԵՕՐԿ: «Րէյտէրի գործ.»: Քաղաքային խորհուրդը ընդունեց որոշում, որի մէջ ցանկութիւն յայտնվեց, որ հարաւային Աֆրիկայի պատերազմը վերջանայ յօգուտ բօէրների և պախարակվեց Ֆիլիպպեան պատերազմը:

ԿԱԼԿՈՒՏԱ: «Րէյտէրի գործ.»: Կաշմիրի, Կիսօի և Եօջպուրի կառավարիչները առաջարկեցին բրիտանական կառավարութեան զինուորներ և ձիեր Հարաւային Աֆրիկա ուղարկելու համար: Եօջպուր դրեց կառավարութեան տրամադրութեան տակ իր բոլոր ձիերը: Որոշված է ընդունել որոշ թւով ձիեր ամեն մի առաջարկողից:

ԱՄՍՏԵՐԴԱՄ: «Րէյտէրի գործ.»: «Algemeen-Handelsblad»-ի ներկայացուցիչը խօսակցութիւն է ունեցել Լէյդսի հետ, որը յայտնեց, թէ Դէլագօա նաւահանգստի վրայով հրացաններ ներմուծելու լուրերը բոլորովին զուրկ են հիմունքից և միայն պատրուակ են Անգլիայի կողմից՝ նաւահանգիստը գրաւելու: «Տրանսվաալ ունի բաւական թւով հրացաններ և պատերազմական մթերքներ», աւելացրեց նա. «անհրաժեշտ պատերազմական մթերքներ Տրանսվաալ ինքն է պատրաստում, իսկ ուտելեղէնների պաշարը կը բաւականանայ երկու տարի»: Միջնորդութեան մասին բոլոր լուրերը Լէյդս հնարովի անուանեց: Ինչ վերաբերում է «Daily Mail» լրագրի պնդումներին, թէ Լէյդս դեկտեմբերի 9-ին տեսակցութիւն է ունեցել Դէլկասէի հետ՝ Լէյդս ասեց. «ես այդ օրը ինֆլուէնցայի պատճառով պառկած եմ եղել անկողնում. դրանով ամեն բան ասված է»:

ՀԱՄԲՈՒՐԳ: «Վօլ'ֆի գործ.»: Գերմանական արևելեան-աֆրիկական շոգենաւային ընկերութեան վարչութիւնը տեղեկութիւն է ստացել, որ կայսերական «Bundesrath» պօստային շոգենաւը բռնվեց բրիտանական զինուորական նաւից Դէլէգօա նաւահանգստի մօտ և տարվեց դէպի Դուրբան: Տեղական կօմենդանտը հրաժարվեց բացատրութիւններ տալ: Հաւաստացնում են, որ շոգենաւի վրա չէին եղել պատերազմական ծածուկ մթերքներ: Գերմանական կառավարութեան կողմից անգլիական կառավարութեան ուղղած խնդիրքին, միջամտելու մասին՝ արտաքին գործերի մինիստրութեան կողմից անմիջապէս հետևեց համաձայնութիւն:

ԼՕՆԴՕՆ: «Րէյտերի գործ.»: Լօրդ Րօբէրտսի տեղ՝ Իրլանդիայում գլխաւոր հրամանատար նշանակված է Կօննաուտեան դուքսը:

ԼՕՐԷՆՑՕ-ՄԱՐԿԷԶԷ: «Րէյերի գործ.»: Պրէտօրիայում Մեֆկինգից ստացած պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, դեկտեմբերի 14-ին Մեֆկինգի պահնորդ զօրքը դուրս եկաւ քաղաքից, որի ժամանակ անգլիացիների կողմից սպանվեցին և վիրաւորվեցին 109 մարդ, իսկ բօէրների կողմից 2 սպանվեցին և 7 վիրաւորվեցին:

ԲԵՐԼԻՆ. «Վօլ'ֆի գործ.»: «Lokalanzeiger» լրագրում տպված է Պարիզի «Temps» լրագրի մասնաւոր հեռագիրը, որը ստացված է Լօնդօնից և որի մէջ ասված է. Զինուորական մինիստրութիւնը տեղեկութիւն է ստացել և պահում է գաղտնի այն բանի մասին, որ Կապլանդիայում 50,000 աֆրիկանդերներ ապստամբվել են: Դէ-Աարում Ֆրէնչ և Գատէկր գեներալներին սաստիկ անհանգստացնում են Օրանժեան հանրապետութեան բօէրները. երկուսի միջև յարաբերութիւնները խանգարում են ապստամբված կապլանդիական հօլանդացիները: Մօդդէր-Րիվէրում նոր տեղի ունեցած արիւնահեղ կռուը ստիպեց Մէտուէնին թեքվել դէպի հարաւ. նա ևս անջատված է: Դուրբան—Լէդիսմիթ գծի վրա Բուլլէր յետ մղվեց մինչև Պիտէրմարիցբուրգ: Լէդիսմիթի դրութիւնը յուսահատական է:

ԿՕԼՕՄԲՕ: Ցէյլօնից հաղորդում են «Րէյտէրի գործակալութեան», որ իշխանութիւնները թոյլ են տուել կամաւոր հեծելազօրք կազմակերպելու Ցէյլօնում Հարաւային Աֆրիկայի համար: Շատ երկրագործներ կամաւոր են գրվում:

19 դեկտեմբերի

ՄՕՍԿՎԱ: Կոմս Տօլստոյի առողջութեան մէջ ոչ մի փոփոխութիւն չէ նկատվում դէպի վատը:

ՎԱՇԻՆԳՏՕՆ: «Րէյտէրի գործ.»: Մօտ ժամանակներումս Միացեալ-Նահանգները, Տրանսվաալի համաձայնութեամբ, մէկ օֆիցէր կուղարկեն, որը պէտք է հետևի բօէրների զօրքերի շարժումներին:

ՊԱՐԻԶ: Բարձրագոյն դատարան: Վիճաբանութիւնները շարունակվում են առանց միջնադէպքերի: Դէրուլէդ խօսեց Բարիլլէի օգտին և բացատրեց պլէբիսցիտի ուսումը: Նիստը փակված է:

ԼՕՆԴՕՆ: Թղթակից Վօլսէ, որ նայել էր խորտակված «Pelotas» շոգենաւը՝ սկզբում տարածված լուրերին հակառակ հաղորդում է, որ շոգենաւի վրա ճանապարհորդներ չեն եղել: Հացի մի մասը վերցրել են, յուսալով, որ կարելի կը լինի շոգենաւը հանել ծանծաղուտից:

ԿԱՊՇՏԱԴՏ: «Րէյտերի գործ.»: Վիկտօրիա—Վէստում գտնվող բրիտանական բանակում դեկտեմբերի 16-ին, երեկոյեան, զգուշութեան ազդանշան տրվեց. տեղի ունեցաւ սաստիկ կռիւ բօէրների հետ, որոնք, ինչպէս կարծում ենք՝ կամենում էին քանդել կամուրջը:

ՊՐԷՏՕՐԻԱ: «Րէյտէրի գործ.»: Մամօպօի մօտ գերի վերցրված երեք անգլիացիները հաղորդեցին, որ Պադէլի շտաբից մի օֆիցէր սպանվեց կռուի ժամանակ. Լօրդ Էդուարդ Սէսիլ, լօրդ Սօլիսբերիի որդին, և լօրդ Չարլզ Կավէնդիշ վիրաւորված են: Անգլիացիք դուրս եկան, որպէսզի ձեռք ձգեն բօէրների մեծ թնդանօթը: Անգլիացիների կորուստը շատ ծանր է:

20 դեկտեմբերի

ՖՐԷՐ, 18 դեկտեմբերի: «Րէյտերի գործ». Տուգելա գետում ջուրը յանկարծակի բարձրանալով՝ մի քանի հարիւր բօէրներ կտրվեցին բանակից. ուրիշ մի քանի հարիւր բօէրներ գրաւեցին բլուրը Չիվիլիայի բանակի աջ կողմում: Ուայտից ստացված հեռագիրը հաղորդում է, թէ Լէդիսմիթի մօտ թշնամին մեծ իրարանցումի մէջ է գիշերային յարձակման մի քանի թնդանօթ կորցնելուն պատճառով: Քաղաքում, եղանակի համեմատութեամբ, մեծ երաշտ է տիրում: Այն տանը, որտեղ ճաշում էին սպաները՝ մի ռումբ ընկաւ, որի բեկորներից մի սպայ սպանվեց և մի քանիսը վիրաւորվեցին:

ԼԷԴԻՍՄԻԹ, «Րէյտերի գործ.»: Արևագրով (հէլիօգրաֆով) հաղորդված է հետևեալը. «Այստեղ ամեն ինչ լաւ է: Բօէրների արձակած երկու ռումբերից դուրս եկան շնորհաւորութիւններ, երրորդից՝ պլումպուդդինգ ուտելիքը: Թշնամին շարունակում է իր դիրքերը ամրացնել»:

ՆԱՈՒՊՕՐՏ, «Րէյտերի գործ.»: Ահա երրորդ օրն է, որ երկու կողմերն էլ դադարեցրել են թշնամական գործողութիւնները: Բօէրների մի քանի սպաներ Ծննդեան տօնը անց կացրին Բլումֆօնտէյնում: Անգլիական զօրքերը դեռ գրաւած ունեն Արունդէլը:

ԼՕՆԴՕՆ, «Րէյտերի գործ.»: Ինչպէս հաղորդում են Կապշտադտից դեկտեմբերի 16-ից, զանազան տեղերից ստացված տեղեկութիւնները ցոյց են տալիս, թէ վերջին պարտութիւնների առիթով շատ տեղերում անբաւականութիւնը սաստկացել է. սակայն չը կան նշաններ, որոնք ցոյց տային, թէ շարժումը նախապէս պայմանաւորված է եղել. այնու ամենայնիւ նպատակայարմար է կառավարութեան քայլը, որ որոշել է Հարաւային Աֆրիկայում աւելացնել զինուորված ոյժերի քանակութիւնը:

ԿԱՊՇՏԱԴՏ, 15 դեկտ. «Րէյտէրի գործ.»: Դեկտ. 13-ին, Դէ-Աարից 29 մղոն դէպի հարաւ, Դիլֆօնտէնի մօտ կամաւորները յարձակվեցին բօէրների գնդի վրա, որ եկել էր երկաթուղու կայարանի մօտերը և ցրվեց նրան, առանց որևիցէ կորուստ ունենալու իր կողմից:

Ստէրկստրօմից հաղորդում են դեկտ. 13-ից. թշնամին զբաղված է ամրացնելով իր դիրքը Ալտօմբէրգի մօտ և պատրաստվում է յարձակում գործելու Մօլտէնօի վրա:

ՊԱՐԻԶ. Բարձրագոյն դատարան: Գէրէն ճառը շարունակելով նկարագրում է այն կռիւը, որ ինքը մղում էր Նաւթային ընկերութեան դէմ և այն նեղութիւնները, որոնց ենթարկվեց հրէաների կողմից: Ապա Գէրէն բացատրեց, թէ ինքը հիմնեց հակասեմական լիգան, որի նպատակն էր համախմբել բանուոր դասակարգի շահերը՝ հարստահարիչների դէմ կռուելու համար:

ԱՍՏՐԱԽԱՆ: Դեկտեմբերի 18-ի փոթորիկը ցամաքի և ծովի վրա մօտ կէս միլիոն ռուբլու վնասներ պատճառեց: Քրէհի էժանութիւնը և վառելիքի թանգութիւնը նաւատէրներին վնասներ պատճառեցին:

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ ՄԱՅՆԻ ՎՐԱ. «Վօլֆի գործ.»: «Frankfurter Zeitung» տպագրեց Բաղդադի երկաթուղու պայմանագրի իսկական բնագիրը, որը կապել են թիւրքաց կառավարութեան կողմից՝ վաճառականութեան և հանրային աշխատանքների մինիստր Ցիւնի փաշան, և Անատոլեան երկաթուղիների ընկերութեան կողմից՝ ընկերութեան խորհրդի նախագահ Ֆօն-Սիմէնսը: Այս պայմանագրի զօրութեամբ ընկերութիւնը պարտաւորութիւն է յանձն առնում՝ ոչ ուշ քան ութ տարվայ ընթացքում շինել երկաթուղի Ղօնիայից մինչև Բաղդադ և մինչև Բասրա և ձեռնարկել այս երկաթուղու շահագործութեան:

ՄՕՍԿՎԱ: Կոմս Լ. Ն. Տօլստոյ անկողնում պառկած չէ. նրա առողջութիւնը, թէև դանդաղաբար, բայց յայտնապէս կազդուրվում է: Նա դուրս է գալիս կարճ ժամանակով զբօսանք կատարելու: Ցաւերը գրեթէ բոլորովին դադարեցին:

ԲԱԹՈՒՄ: Ցերեկվայ 1 ժամ 55 րօպէին երկրաշարժ պատահեց Փօթիում, Քութայիսում, Ալէքսանդրօպօլում և Թիֆլիսում: Տատանումը տևեց աւելի քան 10 վայրկեան:

ԼՕՆԴՕՆ, «Րէյտերի գործ.»: Կիմբերլէյի բնակիչների կողմից նոր տարու առիթով ուղարկած շնորհաւորութեան Թագուհին պատասխանեց Կենեվիչ գնդապետին հետևեալը. Սրտանց շնորհակալ եմ. հիացմամբ հետևում եմ արիասիրտ և վճռական պաշտպանութեանը. շատ ցաւում եմ անխուսափելի մարդկային կորուստների համար»:

ԱՄՍՏԷՐԴԱՄ. «Րէյտէրի գործ.»: Օրանժեան հանրապետութեան ներկայացուցիչը Հաագում՝ լիազօրութիւն է տուել «Nieuwe Rotterdamsche Courant» լրագրին յայտնելու, թէ անհիմն են այն լուրերը, իբր թէ Օրանժեան հանրապետութեան բօէրները կասկածելի դիրք են բռնել Տրանսվաալի բօէրների վերաբերմամբ կամ թէ երես են դարձրել նրանցից: «Այս մասին խօսք անգամ, չէ կարող լինել», ասում է նա. «Նրանք բոլորը անմիտ զրոյցներ են, որոնք նպատակ ունեն Անգլիային քաջալերելու: Օրանժեան հանրապետութեան ազգային ժողովը միաձայն ընդունեց, թէ Տրանսվաալի առաջարկութիւնը, որ օտարերկրացիք հինգ տարի իրանց երկրում մնալուց յետոյ միայն կարող են ընտրողական իրաւունք ստանալ՝ բոլորովին բաւարար էր: Նոյնպէս ժողովը միաձայն որոշեց օգնել Տրանսվաալին պատերազմի ժամանակ: Օրանժեան հանրապետութիւնը միայն մի ձգտում ունի, այն է, որ Աֆրիկէի երկու հանրապետութիւնների անկախութիւնը պահպանվի:

ՊԱՐԻԶ: «Հաւասի գործ.»: Բարձրագոյն դատարան: Վիճաբանութիւնները շարունակվում են. Գէրէն յարձակվում է սենատօրների վրա և ապացուցանում է, որ այս դատը անարդար գործ է. նա բողոքում է հրէաների գործողութիւնների դէմ: Պրոկուրորը սպառնում է պատիժ: Գէրէն շարունակում է: Ներկայ եղողներից մէկը նիստի սկզբում յանկարծակի մեռաւ:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ի. Ֆ. ԳՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1½—2 ժ. ներքին հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Ֆ. ԳՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ.
Ա. Ն ՇԳԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն մէզի, խխի և արեան:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
66—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺ. ՍԻԽԱՅԻԼ ԳԵԴԵՎԱՆՕՎԻ

Հիւանդներին ընդունում է ամեն օր, բացի կիրակի օրերից:

Առաւօտները՝

Վ. Ի. ՃԻՃԻՆԱՁԷ—ատամների հիւան. 8—10 ժ.
Գ. Գ. ՄԱՂԱԼՕՎ—ներքին հիւանդ. 9—10 ժ.
Դ. Կ. ԷՐԻՍԹՕՎ—վիրաբուժութեան. 10—12 ժ.
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—ականջի, կոկորդի և քթի հ. ամեն օր. 10½—12 ժ.
Ա. Ն. ՇԱՏԻԼՕՎ—աչքի հ. 12—1 ժ.
Ն. Զ. ՌՈՒՄԻԿՕՎ—երեխաների հ. երկուշաբթի և ուրբաթ օր. 12-1 ժ.
Վ. Լ. ՄԱՐԿԵՎԻՉ—վիրաբուժական հ. 12½—1½ ժ.
Ի. Դ. ԲԷԳԹԱԲԷԳՕՎ—վեներական, մորթի և միզասեռ. հ. 1½—2 ժ.
Մ. Ա. ԳԵԴԵՎԱՆՕՎ—նեարդային և ելեկտրոթերապիա, 1—2 ժ.

Երեկոները՝

Դ. Ա. ԳԵԴԵՎԱՆՕՎ—ներքին և երեխաների հ. (ծաղկահատութիւն) 5—6 ժ.
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ—կանանց և մանկաբարձական, 5—6 ժ.
Ս. Ի. ՎԱՑԱՁԷ—ներքին հ. և մասսաժ, 6—7 ժ.

Հիւանդանոցում գտնվում են մշտական մահճակալներ և բժշկական սենեակ խոշորացուցական և քիմիական հետազօտութիւնների համար:

Վճարը խորհրդի համար—50 կ. Մնացածը պայմանով:

Նիկոլաեվսկայա փողոց, Վորոնցովի արձանի հանդէպ, տ. Սազինովի, № 11.

Հիւանդանոցի վերատեսուչ՝
17—20 Միխայիլ Գեդեվանով

Թիֆլիսի տոհմական պատուաւոր քաղաքացի Ալէքսանդր Յովհաննիսեան Մանթաշեան, քաղաքում նաւթի և փայտի թանգանալու պատճառով, յանձնել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան հինգ վագոն ցիստերն նաւթ, մինչև 3500 պուդ ծանրութեամբ, քաղաքի ամենաաղքատ բնակիչների վրա ծախելու պուդը մի րուբլիով, այն պայմանով, որ դրանից գոյացած գումարով անվճար փայտ և ածուխ աղքատներին ձրի բաժանելու համար: Ի նկատի ունենալով այդ՝ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն Թիֆլիսի ազգաբնակութեան, որ վարչութիւնը դեկտեմբերի 17-ից սկսած՝ քաղաքի չքաւոր ազգաբնակութեան վրա կէրօսին ծախելու է քաղաքի հետևեալ 11 կէտերում.

1) Նաւթլուղում, Բէյտէրովսկայա փողոցի վրա, ջրանցքի բուտկայում:
2) Կախէթինսկայա հրապարակի վրա, Առևտրական ոստիկանութեան բուտկայում:
3) Չուղուրէթում, ռուսաց Նիկոլաեվսկայա եկեղեցու մօտ, ջրանցքի բուտկայում:
4) Աւճալեան հրապարակի վրա (Մոլոկանսկայա) ջրանցքի բուտկայում:
5) Նախալօվկայում, ջրանցքի բուտկայում:
6) Դիդուբէյում, 2-րդ գիշերային ապաստարանում:
7) Օլգինսկայա և Ցխնետսկայա փողոցների անկիւնում, ջրանցքի բուտկայում:
8) Մթածմինդայում (Դավիդովսկայա հրապարակ) ջրանցքի բուտկայում:
9) Մուխրանսկայա փողոցի վրա, ջրանցքի բուտկայում:
10) Մէյդանում, քաղաքային կշեռքի մօտ:
11) Վորոնցովսկայա փողոցի վրա՝ Զիթախովի գործարանի դիմաց, առաջին գիշերային ապաստարանում:

Նաւթը կը ծախվի ֆունտը 2½ կոպէկով:—Ամեն մէկը կարող է առնել միայն 4 ֆունտ: Կը սկսվի ծախել առաւօտեան 12 ժամից և կը շարունակվի մինչև երեկոյեան ժամի 5-ը: Ձրի փայտ բաժանելու մասին կը յայտարարվի առանձին: 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԷԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ.պ. փոխառուների, որ 1900 թւի յունվարի 2-ը կիրակի օր լինելու պատճառով, 1900 թւի յունվարի կիսամեակի վճարները կընդունվեն երկուշաբթի, յունվարի 3-ին, միայն կանոնադրութեան 71-դ յօդ. համաձայն տուգանքի յաւելուածով: Այդ պատճառով ընկերութիւնը պարտք է համարում յայտնել պ.պ. փոխառուներին, որ այն անձինք, որոնք ցանկանում են խուսափել տուգանք վճարելուց՝ կարող են յունվարի վճարը ներկայացնել ընկերութեան կասսային դեկտեմբերի 31-ին: 1—1

Նոր լոյս տեսան և վաճառվում են—

1) ԿԱՐՄԷՆ ՍԻԼՎԱ—«Մայրական սէր» 2 կ.
2) Է. ԶՕԼԱ—«Երկու մահ» . . . . 5 »
3) Է. ԱՄԻՉԻՍ—«Փոքրիկ Թմբկահար» 3 »

Դիմել Թիֆլիս, Կենտրոնական գրավաճառանոց: 1—3

Եղբայրս, Վանայ նահանգի Ոզմեցի, Յովհաննէս Մահդեսի-Շահինեան, միջահասակ, թխադէմ, 36 տարեկան, մօտ 3 տարի է Թիֆլիսից գնացել է Բագու: Մինչև այսօր ոչ մի տեղեկութիւն չունենալով՝ սրանով դիմում եմ հայ հասարակութեան, ով որևէ տեղեկութիւն ունի եղբօրս—կենդանի թէ մեռած Յովհաննէսի մասին՝ բարեհաճի, յանուն քրիստոնէութեան, յանուն մարդասիրութեան հաղորդել ինձ հետևեալ հասցէով. Вагаршапатъ, Эрив. губ., сел. Гечерлу, Овнанъ Муг. Шагинянъ
1—3

ԲԱՆԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ
Հինգշաբթի օր, դեկտեմբերի 23-ին

✦ ՀԱՄԵՐԳ ✦

Խ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ

Մասնակցութեամբ օր. Ալիխանեանի, պ.պ. Վարդիկեանի, Ղարագեօզեանի Մ. Ռոստոմեանի և 70 հոգուց բաղկացած խմբի: 2—4

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ: Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.:

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը: Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագւում. նաև Միքայէլեան կամուրջի վրա, Գապովի և Արիստակովի դեղատներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով: 27—100

За успѣшнія занятія благодарности.

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ

преподаетъ
Полный курсъ БУХГАЛТЕРІИ
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная италіянская), **2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.**

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Занятія съ января мѣсяца. 1—100

Годъ занятій десятый.

Преподов. ведется по собств. сочиненіямъ.

Եղբարք Ե. և Մ. Միրզաբէկեանցների
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ԲԱԳՒՈՒՄ

Ի նկատի առնելով, որ տարէց տարի մեր գործարանի ծխախոտի և պապիրոսի պահանջը գնալով մեծանում է՝ մենք, որպէսզի դիւրութիւն լինենք տուած մեր մշտական գնողներին՝ վճռեցինք Թիֆլիսում (Հալաբարի կամուրջի մօտ, տուն Խասբլովի) բանալ սեփական խանութ, որտեղ կարելի է միշտ ստանալ ծխախոտի և պապիրոսի ամենաընտիր տեսակները: Հրաւիրում ենք պ. պ. ծխողներին անձամբ համոզվելու մեր ծխախոտի բարձր յատկութեան:

Օտարաքաղաքացիք իրանց պատուէրներով դիմում են—Тифлисъ, **Табачный магазинъ Бр. Мирзабековыхъ.**

Պատուէրները կատարվում են ճշտութեամբ և շուտ: 1—10

1846. 1865. 1882. 1896.
ՀԱՑԹԱՅԹՈՂ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ՊԱԼԱՏԻ

Ա. ՌԱԼԼԷ և ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱ.

ՕԾԱՆԵԼԻՔ

ՌՕԵԱԼ-ՌԱԼԼԷ

Հոտաւէտ ջրեր, սապօն և պուդրա
ԾԱՂԿԱՅԻՆ ՕԾԱՆԵԼԻՔ
ՀՈՏԱՒԷՏ ՋՐԵՐ, ՍԱՊՕՆ և ՊՈՒԴՐԱ 6 հոտով.
Շուշան, եասաման, ռեզէդա, ֆիօլէտ, պաչուլի, գելիոտրոպ.
3 ԱՌԱՐԿԱՅԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԱՐԿՂԸ 2 ՌՈՒԲԼԻ:
МОСКВА, 1) Пассажъ Солодовникова. 2) Тверская, д. Спиридонова.
С.-ПЕТЕРБУРГЪ, Невскій, 18. М. 59806
Նաև Ռուսաստանի յայտնի դեղատներում:

(Հ.) М. 59,806

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ և ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը. երկու շաբաթը մի անգամ,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 23 դեկտեմբ. 3 յունվարի ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը. նաւապետ ԲԻԱՆԿԻ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետո:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխօվի և Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկօվի, № 27: ՆՈՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մեխիտար Հերշենրօդերին:
(Ե. Հ. Չ.) 2—20

ԲՐՕԿԱՐ և ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆ

Օծանելիքներ

ՋՐԱՅԻՆ-ՇՈՒՇԱՆ

Սաստիկ և դուրեկան հոտ.

ՍԱՊՕՆ, ՕԾԱՆԵԼԻՔ ԵՒ ՓՈՇԻ: М. 87676

Дозволено цензурою, Тифлисъ, 20 Декабря 1899 г.
Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул. № 27.